



Վարդավառ Կամ Այլակերպութիւն Քրիստոսի

Վարդավառը Հայոց հեթանոսական կրօնքէն մնացած Աստղիկին նուիրուած տօնին անունն է:

Վարդավառի առթիւ աղաւնի թռցնելու եւ իրարու վրայ ջուր սրսկելու սովորութիւնն ալ Աստղիկի տօնէն մնացած է:

Քրիստոնէական բարեպաշտութիւնը սիրեց յետոյ անոնց մէջ տեսնել Աստուածաշնչական հին աւանդութեանց, այսինքն Ջրհեղէղի եւ Նոյեան աղաւնիի, եւ այլ իրողութեանց մնացորդները:

Վարդավառ՝ Քրիստոսի Այլակերպութեան կամ Պայծառակերպութեան տօնն է:

Յիսուս իր աշակերտներէն՝ Պետրոսի, Յակոբոսի եւ Յովհաննէսի հետ բարձրացաւ Թաբոր լեռը՝ աղօթելու համար:

Աղօթքի ժամանակ Յիսուս այլակերպեցաւ, դէմքին տեսքը փոխուեցաւ եւ արեւու նման լուսաւոր ու փայլուն եղաւ. հագուստներն ալ լոյսի նման սպիտակացան: Նոյն պահուն լուսաւոր ամպ մը շուք ըրաւ աշակերտներուն վրայ եւ Աստուծոյ ձայնը լսուեցաւ երկինքէն, որ կ'ըսէր.

—Ասիկա՛ է իմ սիրելի որդիս, որուն հաւնեցայ. իրեն մտիկ ըրէ՛ք:

Յիսուս իր այս զարմանալի այլակերպութեան հրաշքը գործեց՝ զօրացնելու համար աշակերտներուն հաւատքը եւ զանոնք համոզելու որ ինք իրապէս Աստուծոյ Որդին է, ինչպէս վկայեց երկնային ձայնը:

Ընորհաւորութեան օր է՝

Վարդգէս, Վարդավառ, Վարդ, Պատրիկ, Ալվարդ, Զարվարդ, Նուարդ, Պայծառ, Վարդանոյշ, Վարդիդեռ, Վարդուհի, Վարվառէ անունները ունեցողներուն: